

# ՓՐԿԻՉՆԵՐ

*Posted on November 25, 2021 by Keghart*



Category: [Opinions](#)



**Ռուբեն Յովակիմեան, Սեն Ռաֆայել, 9 Հոկտեմբեր 2021**

**«Իւրաքանչիւր ոք պատկերացնում է քաղաքականութիւնը  
ըստ իր մտային հասանելիութեան»: Կարդինալ Ռիշելիօ**

Ցաւալի է տիրող ոչ պետական մտածողութեան բացակայութիւնը մեր քաղաքական դաշտում, ընդհուպ անկիրթ ու գաւառական մթնոլորտը հայրենի Ազգային ժողովում: Երկրի արդի օրհասական եւ դժուարին պայմաններում անպակաս են ինքնաբաւ փրկիչները, բայց սակաւ են նուիրեալները:

Երկուշաբթի, Նոյեմբեր 8-ին, ստորագրուած եռակողմ յայտարարութեան մեկամեայի առիթով Ազատութեան հրապարակում տեղի ունեցաւ Ռոբերտ Քոչարեանի, գլխաւորութեամբ եւ հովանաւորութեամբ «Հայաստան» դաշինքի կազմակերպած հանրահաւաքը, որտեղ խօսք առնելով Ազգային ժողովի փոխնախագահ Իշխան Սաղաթելեանը յայտարարեց, որ «Այդ հաւաքով հիմք են դնում համազգային դիմադրութեան եւ հայ ժողովուրդը պետք է ձեւաւորուի, եւ պիտի ունենայ երկու ճակատ՝ արտաքին եւ ներքին»: Ինչպիսի վեհ եւ խորիմաստ սկզբունք, որ սովետաութիւնից հեռու չէ, միայն պարզ չէ, թէ այդ նշուած ներքին ճակատը ի՞նչ բաղադրութիւն ունի եւ այդ սկսնակ գործիչը իր քաղաքական կնքահօր՝ **քոչի** յաւակնութիւններին յենուելով համարձակում է համազգային մեծութիւնների մասին բարբաջել տեղեակ չլինելով, որ նախկին ընտրութիւններին իր խումբը միայն շուրջ մէկ տոկոսի քուէարկութեան էր հասել եւ աւագակապետի հետ դաշինք կազմելով է, որ յայտնուել է խորհրդարանում եւ ըստ էութեան հեռու չէ անբարոյ լինելուց: Ճիշտ է ասուած, թէ՛ «Քաղաքական ատենաբանութիւնը ծառայում է մի նպատակի՝ սուտն ու կեղծիքը ներկայացնել որպէս ճշմարտութիւն» (Զործ Օրուել): Ցաւօք այդ օրի ենք:

Այդ հանրահաւաքի մեծ գաւեշտը **քոչի** ներկայութիւնն էր՝ միշտ երկրի **միակ փրկիչ** հանգամանքով: Խօսքը ներկաներին ուղղելով նա կարողանում է առանց աչքերը թերթելու եւ պատասխանատուութեան զգացումի բացակայութեամբ յայտարարել թէ «Պարտութիւնը սկսուել է ավելի շուտ, երբ սկսեցին հետապնդել հերոսներին, սկսեցին գլխատել բանակը, կադրային ջարդ իրականացնել բանակում: Իրենց պետք էր ոչ թէ մարտունակ բանակ, այլ պետք էր իրենց հաւատարիմ բանակ: Երբեք ոչ մի բանակ, որը հաւատարիմ է մէկ մարդու, չի կարող լինել մարտունակ»: (տես ԱԶԴԱԿ 9-10) Այդ անձը մինչեւ օրս չի հասկացել եւ երեւի չհասկանայ, կամ չի ցանկանում հասկանալ, որ իր նշած «**Իրենց**»ը հէնց ինքն է, իր իսկ շրջապատով եւ դաշինքներով: Նա շարունակում է իր ուղերձը՝ «Սա արժանապատուութեան հանրահաւաք է, քո ներկայութեամբ ցոյց տուր, որ մերժում ես Արցախի հայաթափումը, իշխանաւորների գանձագողութիւնը» : Ինչ անենք.- ծիծաղենք, լանք թէ ողբանք, երբ արժանապատուութիւնից է համարձակուում խօսել մի անձ, որ լինելով գուրկ այդ որակից՝ ժամանակին յայտարարում էր, թէ Հայաստանի միակ տղամարդն է, որի կատարեալ ապացոյցն էր

թիկնապահների միջոցով սրճարանի գուժարանում իր ուսանողական դասընկերոջ Պողոս Պողոսեանին սպանելը: Արցախի հայաթափուլթիլնն է նշում, երբ Հայաստանի վարչապետ նշանակուելով՝ Արցախից Երեւան տեղափոխեց իր հաւատարիմներին՝ ընտանիքներով հանդերձ, իսկ գանձագողութեամբ կուտակած գումարներով ներդրումներ արեց ամենուրեք՝ բացի Արցախից, յունական կղզի գնելով կամ Աֆրիկայում առիւծի որս անելով: Այսպիսով նա վաստակել է գանձագողութեան դեմ պայքար ծաւալելու լիարժեք իրաւունքը, քանզի ինքն է հիմնական գործող անձը: Ըստ երեւոյթին այդ անձը մի պատրանք ունի՝ կարծելով, թէ ինքը ամենազօր աստուածային պարգեւ է, եթէ ոչ չէր յայտարարի, թէ ինքը կարող էր կանխել 44 օրեայ դժոխքը եւ հարց տուող չեղաւ, թէ ո՞ւմ էր սպասում եւ ինչո՞ւ տեղից չշարժուեց այդ օրերին: Մեր կարծիքով նա՝ ոչ աւել ոչ պակաս անբարոյ ստախոս խաբեբայ է: Նա նոյնիսկ չի յիշում, որ Մարտի 1-ի առիթով հրամայել էր սահմանին եղած բանակը տեղափոխել Երեւան իր պաշտպանութիւնը ապահովելու նպատակով: Այս բոլորի հետ մէկտեղ անկարելի է պարզամիտ մի հարց չտալ, թէ ա՛յս ազգը փրկելու ցանկութեամբ այրուող անզուգական հոգիները, եթէ իրենց պայքարը մտադիր էին փողոցներում կայացնել, ապա ինչո՞ւ մտան խորհրդարան եւ եթէ մտան, ապա ինչո՞ւ իրենց պարտականութիւններով չեն զբաղուում: *Անհերքելի փաստ է՝ երբ գողանալու առիթ այլեւս չի ունենում՝ գողն իրեն պարկեշտ է համարում:*

*Չարմանալ եւ միաժամանակ ողբալի է, որ մեր հայրենաբնակների մի տեսականի կայ, որ կարողանում է համակրել եւ նոյնիսկ անդամակցել նման խեղկատակներին, ընդհուլումանք մասնակցում են ցոյցերին պիցցայի մի բաժին կամ դրամային փոխհատուցում ձեռք բերելու յոյսով, քանզի ինչպէս լուսահոգի մայրս իր խարբերոցի բարբառով կ՛ասեր՝ «անցուկը մոռցուկ է»:*

**There are no comments yet.**